



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ

Diocese of the Armenian Church of America

TELEPHONE:
LEXINGTON 2-5790

630 SECOND AVENUE
NEW YORK 16, N. Y.

Թիւ 11032
Յունուար 16, 1964

Մեծցյարգ
Տիար Մանուկ Պաղտասարեան
Ատենադպիր Պատուարժան Մխական Խորհուրդի
Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ
Պինկհամթըն.

Սիրելի Պրն. Պաղտասարեան,

Ստացած ենք 1964 Յունուար 10 թուակիր 9-եր տեղեկագիրը,
որով կը հաղորդէք թէ 1963 Դեկտեմբեր 8-ին գումարուած Տարեկան
Մխական ժողովը կատարած է Մխական Խորհուրդի մասնակի ընտրու-
թիւն, եւ ներկայացնելով քուէարկութեան արդիւնքը, կը խնդրէք
ընտրուած անձերուն վաւերացման պաշտօնագիրը:

Նկատի ունենալով որ Ձեր ժողովը տեղի ունեցած է Թեմական
Կանոնադրութեան տրամադրութեանց համաձայն, եւ ընտրութիւնը կատ-
արուած է ըստ օրինի, այսու կը վաւերացնենք հետեւեալները՝ իր-
րեւ անդամ Մխական Խորհուրդի:

Տիարք՝ Նշան Բէչոյեան
Վարդան Սողոմոնեան
էտի Սէրայտարեան

Կը յանձնարարենք որ Մխական Խորհուրդի նոր դիւանի կազմի
անուն-հասցէները Առաջնորդարան ղրկէք փութով:

Այսու օրհնելով Մխական Խորհուրդիդ նոր կազմը՝ կը մաղ-
թենք ամենուդ յաջող եւ արդիւնաւոր գործունէութեան տարի մը, ի
պայծառութիւն Ս. Եկեղեցւոյդ եւ ի հոգեւոր շինութիւն համայնքիդ
մեր սիրեցեալ ժողովուրդին:

Մնամք Տիրաւանդ սիրոյ ողջունիւ
եւ օրհնութեամբ
Աղօթարար

ՍԻՈՆ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ Հայոց Ամերիկայի
եւ Գանատայի